

ԻՎ ՏԵՐՆՈՆ

ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅՈՒՆ,
ՎՐԵԺ ԵՎ ԺԽՏՈՒՄ.
ՀԱՅԿԱԿԱՆ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՌՋԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿՄԵՂԵՏ

ԻՎ ՏԵՐՆՈՆ

ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅՈՒՆ,
ՎՐԵԺ ԵՎ ԺԽՏՈՒՄ.
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՌՋԵՎ

A II
88503



ՀՏԳ. 941(479.25)
Գ.ՄԴ. 63.3(2Հ)
Տ 487

Աշխատությունը հրատարակության է երաշխավորվել
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Թարգմանությունը՝ ֆրանսերենից՝
ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՀԱԿՅԱՆԻ

Տեքստն էվ

Տ 487 Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական
ցեղասպանության միջազգային ատյանների առջև.-
Եր.: Նահապետ, 2003, 36 էջ:

Տ $\frac{0503020913}{0076(01) 2003}$ 2003թ.

Գ.ՄԴ. 63.3 (2Հ)

ISBN 99930 - 994 - 3 - 0

1915թ. գարնանից մինչև 1916-ի աշունն ավելի քան մեկ միլիոն հայազգի օսմանյան քաղաքացիներ մատնվեցին մահվան համաձայն մի ծրագրի, որը հղացել էին այդ ժամանակ օսմանյան կառավարության գործունեությունը վերահսկող «Միություն և առաջադիմություն» (*Ittihad ve - Terakki*) կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամները և որն ի կատար անվեց քաղաքացիական բնակչության ու զինվորականության հազարավոր ներկայացուցիչների միջոցով: Բացառությամբ 1916թ. դատված և մահապատժի ենթարկված երեք ոչ հիմնական (երկրորդական) դավաճործների, զանգվածային այս կոտորածի հիմնական մեղավորները, կոտորած, որն այսօր ամենայն համոզվածությամբ կարելի է որակել իբրև ցեղասպանություն, այդպես էլ երբևէ չպատժվեցին: Մի ցեղասպանության անպատիժ մնալը կարող է միայն դյուրացնել այդ կարգի ոճիրների իրագործումը. ցեղասպանությունը քրեական կատեգորիա է, մարդկության դեմ գործված հանցանքների ծանրագույնն է: Այս անպատժելիությունը նաև փաստարկ ու ժխտման հիմք է դառնում բոլոր նրանց համար, ովքեր հրաժարվում են որպես ցեղասպանություն որակել տվյալ իրադարձությունը, այն է՝ ոճրագործության իրագործման նպատակի ապացույցի բացակայությունը, ապացույց, որը դատարաններին կարող էր տալ ավելին, քան միայն փաստաթղթերը: Բայց այս փաստարկն անընդունելի է մի շարք նկատառումներով. մի կողմից իր առատությամբ և տեսակով հարուստ մատչելի փաստաթղթերը բավական են բացահայտելու համար այդ ապացույցը, ինչը ավելին է, քան իրավունք ունենք պահանջելու պատմական փաստից, մյուս կողմից, արդեն տեղի են ունեցել զանազան դատավարություններ: Սակայն ոճրագործներին դատող ատյանները ոչ թե միջազգային դատարաններ էին, այլ ազգային, իսկ դատավարությունների հետքերը, ինչպես երևում է, ոչնչացվել են բուրբակյան արխիվներից: Հետագայում ուրիշ դատարաններ ևս իրավասու եղան քննելու հայկական ցեղասպանությունը, բայց այլ հանգամանքներում, երբ նրանք դատում էին մի հայ մեղադրյալի, որը մեղադրվում էր հայերի ցեղասպանության պատասխանատուներից մեկի սպանության

մնջ. կամ էլ, ավելի ուշ, թուրքական քաղաքացիների՝ հատկապես դիվանագետների հանդեպ գործադրված բռնարարքների մնջ, և կամ ցեղասպանության փաստը ժխտող մի պատմաբանի դատելիս:

Հայկական «աղետը» դարձավ շաղկապված իրադարձությունների հետևանք: Մարդասիրական միջամտության սկզբունքը, որը հաստատվել էր եվրոպական ազգերի կողմից, թույլ էր տալիս նրանց միջամտել Օսմանյան կայսրության ներքին գործերին: Այդ միջամտությունն արտաքին հովանավորություն վայելելու պատրանք էր ստեղծում մինչ այդ լուռումուռ ազգային փոքրամասնությունների մոտ, ինչպիսին էր և հայկական համայնքը: Իսկ սուրբանը եվրոպական միջամտությունն օգտագործեց որպես պատճառաբանություն՝ հայերին պատժելու համար. նրանք դադարել էին հավատարիմ համայնք համարվելուց, քանի որ խնդրել էին Եվրոպայի հովանավորությունը: 1894-ից մինչև 1896թ. նա ոչնչացրեց 200000-ից 300000 հայերի, իսկ Եվրոպան բավարարվեց միայն բողոքով՝ առանց միջամտելու՝ այդպիսով Բարձր Դռանը տալով բաց քարտ՝ «էթնիկական մաքրման» ավելի լայնածավալ գործողությունների համար: 1908թ. հետո, չնայած ռեժիմի փոխվելուն և օսմանյան սահմանադրության վերականգնմանը, երևութուրքերի կողմից ղեկավարվող և գնալով ավելի մոլեռանդ դարձող ազգայնական Միություն և առաջադիմություն կուսակցության իշխանության գլուխ անցնելուն, հայկական համայնքը սկսեց դիտվել թուրքիայի ապագայի համար իբրև կենսական վտանգ, և «Լեթնիադի» առավել ծայրահեղական ֆրակցիայում հղացավ այս անգամ արդեն ոչ թե պարզապես «էթնիկական մաքրման», այլ կայսրության հայերի բնաջնջման ծրագիրը: 1914թ. նայեմբերի 1-ին, Օսմանյան կայսրության ներքաշվելը պատերազմի մնջ՝ մեծ տերությունների կողքին, երևութուրքերին հնարավորություն ընձևեց ի կատար ածելու այդ ծրագիրը:

1915թ. մայիսի 24-ին, մամուլի գործակալությունների միջոցով արագորեն տեղեկանալով կայսրության արևելյան, մեծ մասամբ հայաբնակ գավառներում պարբերաբար կրկնվող կոտորածների վերսկսման մասին, Անտանտի արտաքին գոր-

ծոց երև ք մինիստրները Բարձր Դռանն են հղում մի ոչ երկ-
ինաստ նախագուշացում:

«Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կառավարու-
թյունները որոշեցին, ընդհանուր համաձայնությամբ, անել
հետևյալ հայտարարությունները.

Արդեն մեկ ամիս է, ինչ Հայաստանի քուրդ և թուրք
բնակչությունն օսմանյան իշխանությունների թողտվությամբ,
իսկ հաճախ էլ օժանդակությամբ, հայկական կոտորածներ է
իրականացնում: Նման կոտորածներ տեղի են ունեցել նոր տո-
մարով, ապրիլի կեսերից սկսած, Էրզրումում, Դերջանում, Ալ-
նում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Ջեյթունում և ողջ Կիլիկի-
այում: Վանի շրջակայքի հարյուրի չափ գյուղերի բոլոր բնա-
կիչները ենթարկվել են սպանդի. իսկ քաղաքի հայկական թա-
ղամասը պաշարվել է քրդերի կողմից: Միևնույն ժամանակ,
Կոստանդնուպոլսում, օսմանյան կառավարությունը մոլեգնում
էր անմեղ հայ բնակչության դեմ:

Նկատի ունենալով մարդկության և քաղաքակրթության
դեմ Թուրքիայի գործած այս նոր ռճիրները՝ դաշնակից կառա-
վարությունները Բարձր Դռանը տեղեկացնում են, որ իրենք
անձնական պատասխանատվության կենթարկեն օսմանյան
կառավարության անդամներին, ինչպես նաև նրա այն գործա-
կալներին, որոնք կմասնակցեն նման կոտորածներին»:¹

Այս հայտարարությունը շարադրվել է ռուս մինիստր
Սազոնովի կողմից, որը, ապրիլ ամսվա վերջից սկսած, տեղի
տալով Վաշինգտոնում և Հռոմում իր դեսպանների ճնշմանը,
պաշտպանել էր այս նախաձեռնությունը: Անգլիայի դեսպանը՝
սըր Էդվարդ Գրեյը, այն ստորագրել էր ակամա: Ֆրանսիական
մինիստր Դելկասեի խնդրանքով նախապես ընդունված բանա-
ձևը՝ «ոճիր ընդդեմ քրիստոնեության և քաղաքակրթության»,
փոխարինվել էր «ոճիր ընդդեմ մարդկության և քաղաքակրթու-
թայն» ձևակերպումով, որպեսզի չփիրավորեին ֆրանսիական
զաղորդների մահմեդականներին: Վերջնական խմբագրման
ժամանակ այդ բանաձևը նորից էր ձևափոխվել՝ դառնալով
«ոճիր ընդդեմ մարդկության»:

¹ MAE A 394, 3, p. 97.

Սպառնալիքը պարզ էր: Որպես հաղորդներ, Եվրոպական դաշնակիցները, ոչ բացահայտ կերպով, իրենց վրա պարտավորություն էին վերցնում դատական պատասխանատվության ենթարկել այդ կոտորածների մեղավորներին՝ իրենց իսկ ստեղծած դատարանների միջոցով: Փոխարենը, եթե այդ նախագգուշացումը չունենար անհրաժեշտ ազդեցությունը, այդ ոճրագործությունները կներվեին: Ենդրվածքը, որը բացվել էր մարդասիրական միջամտության հետևանքով կփոխվեր լռությանը և մոռացությանը՝ մի ողջ ժողովրդի անհետացմամբ: Հենց այդպես էլ եղավ:

Բաց թողնվեց մի առիթ՝ առաջ մղելու միջազգային քրեական իրավունքը, որն այդ ժամանակ թեև դեռևս ուրվագծային վիճակում էր քաղաքական շրջաններում, սակայն պարզորոշ կերպով մտահղացված էր իրավաբանների կողմից: Ստանձնած պարտավորություններից նման խոստովումը ի հայտ է բերում այն կոնֆլիկտը, որն անցնում էր ողջ XX դարի միջով՝ կոնֆլիկտ միջազգային ատյանների և ազգային անկախության միջև, այսինքն՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և ազգերի քաղաքական շահերի միջև: Ազգերը միայն մի կարճ պահ կունենան զրա խաղազուժարը չափելու համար՝ երբ կստեղծվի Նյուրնբերգյան իրավունքը:

Միջազգային քրեական իրավունքի ձևակերպման փորձերը
Առաջին համաշխարհային պատերազմից հետո

1918թ. հոկտեմբերի 30-ին, Թուրքիան ստորագրում է Մուդրոսի գինադադարը: Նա գլխավին ջախջախվել էր Դաշնակիցների, հատկապես Անգլիայի կողմից: Ինչպես հիշում է Ուինստոն Չերչիլը. «Մեծ պատերազմում սպանված բուրքերի երեք քառորդը ընկել էր բրիտանական գնդակներից և սփննե-րից»:² Թուրքիան մեղավոր էր և սպասում էր միջազգային պատժամիջոցների՝ պատերազմական ոճիրների և իր սևփական քաղաքացիների դեմ գործած հանցագործությունների համար: Դաշնակիցները սահմանափակվում են իրենց իսկ կող-

² Winston Churchill. La Crise mondiale, Paris, Payot, vol. 4, 1931, p. 357.

մից արված մայիսի 24-ի նախագգուշացումով և դատական գործեր ևն հարուցում այն թուրք պաշտոնյաների դեմ, որոնք կասկածվում էին հայկական կոտորածներին մասնակցած լինելու մեջ:

1919թ. հունվարին, Փարիզում գումարված Խաղաղության կոնֆերանսում նախնական բանակցությունների արդյունքում ստեղծվում է պատասխանատվության և պատժամիջոցների գծով մի հանձնաժողով: ԱՄՆ-ի պետական քարտուղարը՝ Ռոբերտ Լ.անսինգր, որը նախագահում էր այդ հանձնաժողովում, նշանակում է տասնհինգ անդամից բաղկացած մի ենթահանձնաժողով, որին հանձնարարվում է քննել «պատերազմի տարիների օրենքների ու սովորույթների և մարդկայնության սկզբունքների ոտնահարումները»: Թվում էր, թե Դաշնակիցների վճռել էին պատժել գլխավոր տերությունների այն զինվորականներին և քաղաքացիական անձանց, ովքեր կասկածվում էին այդ ոճրագործությունների մեջ: Այդ հետաքննությունները սկսելու համար «Տասնհինգի հանձնաժողովը» վկայակոչում է այն իրավաբանական մեկնակետը, որը սահմանվել էր Հաագայի Առաջին Կոնվենցիայով՝ պատերազմական օրենքների և սովորույթների վերաբերյալ և որի համաձայն «մարդկայնության օրենքները» և «հասարակական խղճի պահանջները» դիտվում են որպես միջազգային իրավունքի սկզբունքների աղբյուր:³ 1907թ. սեպտեմբերի 18-ին ստորագրված Հաագայի Չորրորդ Կոնվենցիայի ներածական մասում պայմանավորվող կողմերը ջանացել էին երաշխավորել քաղաքացիական անձանց և պատերազմի կողմերի պաշտպանվածությունը՝ «հիմնվելով քաղաքակիրթ ազգերի մոտ ընդունված սովորույթների, մարդկության օրենքների և հասարակական խղճի պահանջների վրա»: Այդ հանձնաժողովի անդամ, Հունաստանի արտաքին գործոց մինիստր Նիկոլայ Պոլիտիսն առաջարկում է ընդունել պատերազմական հանցագործությունների մի նոր

³ Violations of the Law and Customs of War. reports of Majority and Dissenting Reports of the American and Japanese Members of the Commission of Responsibilities, Conference of Paris, 1919. Carnegie Endowment for International Peace, Division of International Law, Pamphlet N 32.

կատեգորիա, որը, ազգային քրեական իրավունքներում բարձրացված չլինելով հանդերձ, այդուամենայնիվ համարվելու էր մարդկության օրենքների ոտնահարում: Չնայած ամերիկյան ներկայացուցիչների՝ Ռոբերտ Լանսինգի և Ջեյմս Սքոթի առարկություններին, որոնք հիշեցնում են, թե ցանկացած վերահսկող մարմին պետք է հիմնվի գոյություն ունեցող իրավունքների վրա (մինչդեռ նման մի օրենք պետք է ստեղծվի կատարված փաստերի հիման վրա), համձնաժողովը միանում է Պոլիտիսի կարծիքին: Հանձնաժողովը վկայակոչում է այն երկու սկզբունքները, որոնք ձևակերպվում էին Հաագայում և ճանաչվել քաղաքակիրթ ազգերի կողմից՝ մարդկայնության օրենքները և հասարակական խղճի պահանջները:⁴

1919թ. մարտի 5-ի իր զեկուցագրում «Տասնհինգի հանձնաժողովը» թվարկում է քաղաքացիական բնակչության դեմ կատարված հանցագործությունների՝ սպանությունից սկսած մինչև բռնի տեղահանություն, հարկադիր աշխատանք և ունեցվածքի բռնագրավում:⁵ Մարտի 29-ի իր եզրափակիչ զեկուցագրում հանձնաժողովը, ի ցույց դնելով «մարդկության այս սահմանված պահանջների» ոտնահարումները գլխավոր տերությունների և նրանց թուրք ու բուլղար դաշնակիցների կողմից, եզրակացնում է. «Այդ երկրների պատկանող բոլոր անձինք, ովքեր մեղավոր են հիշյալ ռճիրների գործելու մեջ, ենթակա են քրեական հետապնդման»:⁶ Լանսինգը և Սքոթը վերստին վերապահությամբ էին արտահայտվել «մարդկայնության օրենքներ» բառերի գործածության վերաբերյալ: Նրանց կարծիքով, դրանք ո՛չ արձանագրված էին, ո՛չ էլ ընդունված որպես համընդհանուր ստանդարտներ: Բելգիացի իրավաբան Ռոլեն Ժեկմենի պահանջով «Թուրքիայի՝ իր իսկ հայ քաղաքացիների նկատմամբ գործած ռճիրները» ձևակերպումը նույնությամբ

⁴ *Vahakn N. Dadrian. Autopsie du génocide arménien, Bruxelles, Complexe, 1995, p. 92-93.*

⁵ Տեսուր *Violations...-ում*, մեջբերված ՄԱԿ-ի սևուսական և սոցիալական Խորհրդի Մարդու իրավունքների հանձնաժողովի 1948թ. մայիսի 15-ի զեկուցագրում, *E/CN. 4/W. 20.*

⁶ *La Documentation internationale. La Raix de Versailles, vol. 3. Responsabilités des auteurs de la Guerre et Sanctions. Paris. 1930, annexe 1 au rapport principal.*

պահպանվում է կողմերի պահանջներում:⁷ Հաշտության պայմանագրերում «մարդկայնության օրենքների» վկայակոչումներն ի հայտ չեն գալիս: Վերսալի դաշնագրի 227-րդ հոդվածում խոսվում է միայն պատերազմական օրենքների և սովորույթների ոտնահարման փաստերի մասին. այն հանդիսանում է Լոնդոնի՝ 1945թ. օգոստոսի 8-ի կանոնադրության 6-րդ հոդվածի Ֆր (որը Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանի սահմանադիր հայտարարագիրն է.), ինչպես նաև Տոկիոյի դատարանի կանոնադրության 5-րդ հոդվածի Ֆա-ի նախակարապետը: Խաղաղության կոնֆերանսի անդամները հաստատում են, որ 1914թ. օգոստոսի 1-ին սկսած պատերազմը եղել է «մեծագույն ոճիրը մարդկության դեմ», որ երբևէ գործվել է որևէ քաղաքակիրթ համարվող ազգի կողմից և առաջարկում են ստեղծել մի հատուկ դատարան, բաղկացած հինգ անդամից՝ Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Րուսաստան, որը պետք է դատեր գերմանական կայսր Վիլիելմ II-ին: Իրականում, Հանձնաժողովի աշխատանքները մնում են բոթի վրա մինչև Սերի դաշնագրի խմբագրումը, որը ստորագրվում է Դաշնակիցների և Թուրքիայի միջև 1920թ. օգոստոսի 10-ին: «Ոստժամիջոցներին վերաբերող 226-րդ, 228-րդ և 230-րդ հոդվածները ճանապարհ են հարթում մարդկության դեմ գործվող ոճիրներն կանխարգելման համար:

«Հոդված 226. Օսմանյան կառավարությունը ճանաչում է Դաշնակից պետությունների ազատությունը՝ դատական գործ հարուցելու իրենց ռազմական դատարանների առջև պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող արարքներ գործած անձանց դեմ: Օրենքներով նախատեսված պատիժները կկիրառվեն մեղավոր ճանաչված անձանց նկատ-

⁷ «Ձանցանքների» երկու կատեգորիաները, որոնք հիշվում են «Տասնհինգի հանձնաժողովի» կողմից (մի կողմից, պատերազմական օրենքների և սովորույթների ոտնահարումները, մյուս կողմից՝ պատերազմական ճգնաժամները և մարդկության դեմ գործած ոճիրները) նույնն են, ինչ և Նյուրնբերգի դատարանի հիմնադրման Կանոնադրությունում և Վերահսկողության խորհրդի թիվ 10 օրենքում հիշվողները: Այդպիսով, այս երեք օրինախախտումները և «զանցանքների» այս երկու տեսակները առաջին անգամ են կողմ-կողքի ի հայտ գալիս միջազգային տեսքում:

մամբ: Այս վճիռը կկիրառվի անկախ բոլոր դատավարություններից կամ դատական գործերից, հարուցված Թուրքիայի կամ նրա դաշնակիցների գերատեսչության առջև:

Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հանձնել Դաշնակից տերություններին, կամ նրանցից որևէ մեկին, որը կոլիմի նրան այդ պահանջով, բոլոր այն անձանց, ովքեր կմեղադրվեն պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասով որևէ արարք գործելու մեջ, կմատնանշվեն՝ անվանաբար, քե րստ աստիճանի, կատարած պարտականության կամ զբաղեցրած պաշտոնի, որոնք շնորհվել են այդ անձանց օսմանյան իշխանությունների կողմից:

Հոդված 228. Օսմանյան կառավարությունը պարտավորվում է մեղսագրվող փաստերին լրիվ ծանոթանալու նպատակով դատաքննությունն ապահովել ցանկացած բնույթի փաստաթղթերով և տեղեկություններով՝ մեղավորներին որոնելու և պատասխանատվությունների չափը ճշգրիտ որոշելու համար:

Հոդված 230. Օսմանյան կառավարությունը պարտավորվում է Դաշնակից պետություններից իրենց իսկ պահանջով հանձնել այն անձանց, որոնք մատնանշվում են 1914թ. օգոստոսի 1-ից սկսած և ամբողջ Օսմանյան կայսրության տարածքում կատարված կոտորածների իրականացման մեջ մեղադրվելու համար:

Դաշնակից տերություններն իրենց իրավունք են վերապահում մատնանշելու այն դատարանը, որին կհանձնարարվի դատել այդ կերպ մեղադրված անձանց, իսկ օսմանյան կառավարությունը պարտավորվում է ճանաչել այդ դատարանը:

Այդ դեպքում, եթե Ազգերի Լիգան նշված ժամանակաընթացքում ստեղծած լինի մի իրավասու ատյան՝ դատական կարգով քննելու համար վերոհիշյալ կոտորածները, Դաշնակից պետություններն իրենց իրավունք են վերապահում նշված մեղադրյալներին հանձնել այդ ատյանին, իսկ օսմանյան կառավարությունը պարտավորվում է նմանապես ճանաչել այդ ատյանը»:

Այս դաշնագիրն, օրինակ, անշուշտ, հիմք է ստեղծում

օսմանյան պետության կողմից իր հպատակ հայ քաղաքացի-
ների դեմ գործած ոճիրների դատական հետապնդման համար:
Սակայն այն շարադրվել է այն ժամանակ, երբ, 1918 և 1919թթ.,
անգլիացիները ձայնողվեցին օսմանյան կառավարությունից
այնպիսի «փաստաթղթեր և տեղեկություններ» ստանալու հար-
ցում, որոնք նրանց հնարավորություն կտային դատական գոր-
ծեր հարուցել ենթադրյալ մարդասպանների դեմ, և ստորագրել
այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունը վերջին շնչում
էր, և երբ քննալականությունը վերածվում էր քաղաքական և
ռազմական աճող ուժի: Ուստի դաշնագիրը չվավերացվեց, իսկ
Ազգերի Լիգան չստեղծեց «իրավասու դատարան»՝ դատելու
համար այդ ոճրագործությունների մեջ մեղադրվող անձանց:
Այդուհանդերձ, շարժումը հանուն միջազգային քրեական
իրավասության շարունակում է զարգացում ապրել միջազգա-
յին իրավունքի ընկերակցությունների նեղ շրջանակում:
Նրանց աշխատանքներն ի նկատի էին առնվելու միայն Երկ-
րորդ համաշխարհային պատերազմի վերջում:⁸

Անգլիացիները Կոստանդնուպոլսում

Մուղոսի զինադադարի ստորագրումից հետո դաշնա-
կիցներն օկուպացնում են Կոստանդնուպոլիսը: Սակայն զինա-
դադարի պայմաններն արգելում են ամեն մի միջամտություն
օսմանյան պետության ինքնիշխանությանը, հատկապես ար-
դարադատության բնագավառում: Չնայած դրան, դաշնակից-
ները, ռազմականապես ներկա գտնվելով Կովկասում, Միջա-
գետքում և Մերձավոր Արևելքում, ի վիճակի էին դատական
գործեր հարուցելու այն անձանց դեմ, ովքեր մեղադրվում էին
պատերազմական հանցագործություններին և «հումանիզմի
օրենքների» ռոմահարումներին մասնակից լինելու մեջ՝ մի
կողմից, ռազմագերիների (հատկապես անգլիացիների) հետ
վատ վարվելուն, մյուս կողմից լսադադ բնակչության (գլխավո-
րապես հայերի) բռնի տեղահանություններին և կոտորածն-

⁸ «Միջազգային օրինախախտումների իրավունքի» վերաբերյալ տես *Yves Ternon. L'Etat criminel. Paris, Ed. du Seuil, 1995, p. 20-27.*

րին: Ուստի «Իքսփիհադի» ղեկավարների մեղավորությունը ոչ մի կասկած չի հարուցում: Հիմնական ոճրագործները հայտնի են և մատնանշված: 1917թ. ֆրանսիացի մի իրավաբան՝ միջազգային իրավունքի մասնագետ Տանկրեդ Մարտելը, կազմեց պատերազմի այն հանցագործների ցուցակը, որոնք պետք է դատվեին որպես քրեական հանցագործներ՝ դաշնակից երկրների ռազմական կամ սովորական քաղաքացիական դատարանների կողմից: 1918թ. վերջին Խաղաղության Համաշխարհային ֆոնդի անդամ Շառլ Լ.իվերմորը նույնպես կազմեց մի ցուցակ, որի մեջ մտնում էին «քաղաքակրթության օրենքից դուրս» հայտարարված տասնմեկ ոճրագործ, որոնք արժանի էին «ցուցադրական պատժի» և որոնց թվում էին «Իքսփիհադի» երեք հիմնական պատասխանատուները՝ Թալեսթր, Էնվերը, Ջեմալը:⁹ Նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը վերջիններս չորս ուրիշ երիտթուրքական ղեկավարների հետ (Նազիմ, Շաքիր, Բեդրի, Ազմի) գերմանական մի ռազմանավով փախան Սևաստոպոլ, որտեղից Լյ անցան Բեռլին: Թուրքական ողջ մամուլը մեկնաբանում է այդ իրադարձությունը, մատնացույց անում նրանց որպես հայկական կոտորածների պատասխանատուների և մեղադրում սպասվելիք դատաստանից փախչելու համար:

1919թ. հունվարի 18-ին ծովակալ Կայրոպը՝ բրիտանական գլխավոր հավատարմատարը, հայտարարում է օսմանյան արտաքին գործոց նախարարին, որ Նորին Մեծության կառավարությունը լի է հայկական կոտորածների պատասխանատուներին շոտափույթ պատժելու վճռականությամբ: Նա բուրբական կառավարությանը պաշտոնապես հայտարարում է իր կառավարության հաստատ մտադրությունը՝ կատարելու 1915թ. «քաղաքակիրք աշխարհին» տված իր խոստումը պատժի վերաբերյալ: Անգլիացի իրավաբանները, որոնցից խորհուրդ էին հարցրել, առաջարկում են բուրբ հանցագործներին դատել օկուպացված տարածքում, բրիտանական ռազմական դատարաններով՝ հիմնվելով ոչ թե ներքին օրենսդրության, այլ

⁹ J. Willis. Prologue to Nuremberg: The Policy and Diplomacy of Punishing War Criminals of the First World War, Westport CT, 1982, p. 221.

անգլիական պատերազմական սովորույթի իրավունքի վրա, որով նախատեսված էին պատերազմական օրենքների և սովորույթների ոտնահարման բոլոր հնարավոր դեպքերը:¹⁰ Հետևաբար, չկար որևէ օրինական առարկություն ոչ նման դատարանների ստեղծման, ոչ էլ մեղադրյալներին դաշնակիցների բանտերում կալանված պահելու համար: Սակայն թուրքական իշխանություններն ընդդիմանում են դրան՝ համարելով այդ գինադադարի համաձայնագրերով ճանաչված օսմանյան ինքն-իշխանության ոտնահարում: Օսմանյան կառավարության բռնած նման դիրքը հակասում է. «Տասնհինգի համձնաժողովի» եզրակացություններին, որը հրաժարվում է ազգային դատարանների ստեղծումը որպես օրինական դիտելուց: 1919թ. ապրիլին բրիտանական արտաքին գործոց նախարար լորդ Բեյֆորը սպառնում է թուրքական կառավարությանը՝ արգելելով նրան դատարաններ կազմել, նախքան Խաղաղության կոնֆերանսը կորոշեր մեղադրյալների հետագա ճակատագիրը:¹¹ Այդ սպառնալիքը չափազանց ուշ է տեղ հասնում և ոչ մի ազդեցություն չի ունենում. թուրքերն արդեն սկսել էին դատավարությունները: Օսմանյան իշխանությունները 1919թ. հունվարին, դաշնակիցների համաձայնությամբ, սկսել էին ձեռքակալությունները: Սակայն մեղադրյալների դեմ դատական գործեր էին հարուցվել փետրվարից սկսած, թուրքական ռազմական դատարաններում. առաջին դատավճիռներն առաջ բերեցին այնպիսի մեծ թափի համաժողովրդական ցույցեր՝ ի պաշտպանություն մեղադրյալների, որ մայիսի 21-ին մեծ վեճերը՝ օսմանյան պրեմիեր-մինիստրը, ազատ արձակել տվեց 41 բանտարկվածներին, թեև նրանք մեծ մասնակցություն էին ունեցել կոտորածներին:

Ահա քն ինչու, 1919թ. մայիսի 28-ին, հունական բանակի կողմից Ջմյունուհայի օկուպացումից քիչ անց, Խաղաղության կոնֆերանսի Գերագույն խորհրդի հրամանով անգլիացիներն անակնկալ առևանգեցին Բեյքիրադայի թուրքական ռազմական բանտում 69 բանտարկվածներին: Նրանցից 12-ը, որոնք

¹⁰ V. Dadrian. Op. cit., p. 97.

¹¹ Նույն տեղում:

պատերազմական կառավարությունների նախկին մինիստրներ էին, ուղարկվեցին Մուղրոս, իսկ մյուսները բանտարկվեցին Մայրալոմ: Որոշ ժամանակ անց նրանց միացան նաև 12 մինիստրներ: 1920թ. օգոստոսին, այլ ձեռքակալություններից հետո, Մայրալոմ գտնվող թուրք բանտարկյալների թիվը հասավ 118-ի:¹² Սակայն ուժի այդ ցուցադրումը դառնում է անիմաստ, քանի որ քաղաքական մթնոլորտն արագորեն վատանում է: Մուղրոսի գլխադադարը Թուրքիային բույլ էր տալիս պահել և հանդերձավորել բանակային զորամիավորումներ իրենց ստորաբաժանումներով ու շտաբներով և դանդաղեցնել զինաբաժնման ու զորացրման գործողությունները: Կոստանդնուպոլսի կառավարությանն րնդդիմադիր թուրքական մի ազգայնական ուժի՝ քեմալական շարժման ի հայտ գալը Կենտրոնական Անատոլիայում, հանգեցրեց դաշնակիցների կոալիցիայի քայքայմանը: Ֆրանսիան և Իտալիան մերձենում են քեմալականներին, որոնց ազդեցությունը գնալով աճում էր (Սվազի կոնգրես՝ 1919թ. սեպտեմբերի 9, Ազգային Պակտ՝ 1920թ. հունվարի 28), և սաբոտաժի են ենթարկում անգլիացիների ցանքերը, որոնք ուղղված էին սուլթանի և նրա կառավարության հեղինակությանը վերականգնելուն: Իրականում Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի շահերն արդեն վաղուց հակադիր էին: Երկու տերությունների միջև կնքված Սայքս-Պիկոյի համաձայնագիրը կարգավորեց Սերձավոր և Միջին Արևելքի բաժանումը նրանց միջև: Սակայն այլ համաձայնագրեր Մեծ Բրիտանիային կողմնորոշում են դեպի Մեքքայի շերիֆը՝ Հուսեյնը, և Խաղաղության կոնֆերանսը փորձում է լուծել այդ հակասությունները՝ առաջարկելով դիմել մանդատների ավելի ճկուն համակարգին: Այդուհանդերձ, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի շահերի բախումը քեմալականների և Կոստանդնուպոլսի կառավարության միջև, Թուրքիայի բաժանման մթնոլորտում անիրական են դարձնում այն պարտավորության հարգումը, որը դաշնակիցներն ստանձնել էին 1915թ. մայիսի 24-ին:

1919թ. սեպտեմբերի վերջին, երբ սուլթանի փեսայի՝ Դամադ Ֆերիդ փաշայի օսմանյան կաբինետի հրաժարականն

¹² V. Dadrian. Op. cit., p. 97.

անխուսափելի և դառնում, բրիտանական նոր գլխավոր հավատարմատարը՝ ծովակալ Ռոբերթը, համոզում և լորդ Քերզոնին շարունակելու բանտարկյալների տեղափոխումը Մալթա: Բրիտանական օկուպացիայի սկզբից ի վեր անհաղթահարելի և ին այն դժվարությունները, որոնց հանդիպել և ին անգլիացիները փաստաթղթեր և տեղեկություններ հավաքելիս: Այդ նյութերն էին, որ պիտի թույլ տային մեղադրանք ներկայացնել հայկական կոտորածների հեղինակներին: Օսմանյան կառավարությունը հրաժարվում է անգլիացիներին հանձնել իր հավաքված փաստաթղթերը, իսկ գավառների թուրք պաշտոնյաները զրանում են իրենց փաստաթղթերը փոխանցել բրիտանական գլխավոր հավատարմատարությանը: Այնուամենայնիվ, չնայած այս խոչընդոտներին, մեղադրական գործերը կազմվում են, իսկ Մալթայի բոլոր 118 բանտարկյալներն և՛ կասկածվում են հայկական կոտորածներին ուղղակի կամ անուղղակի մասնակցած լինելու մեջ: Ահա թե ինչու 1920թ. վերջին Անգլիայի Թագավորության արդարադատության գերատեսչությունները պահանջում են դատական գործ հարուցել որևէ միջազգային դատարանի առջև՝ մի լուծում, որ նոր էր առաջարկվել Սերի դաշնագրի 230-րդ հոդվածով:¹³ Բրիտանական կառավարությունը հրաժարվում է դրանից: Այն նախընտրում է Մալթայի բանտարկյալներին օգտագործել որպես մանր դրամ՝ քեմալականների կողմից դեռևս բանտում պահվող անգլիացիների հետ փոխանակման դիմաց: Քեմալականները պանաջում են ընդհանուր փոխանակում: Այդ ընթացքում, 16 իթթիհադականներ, այդ թվում այնպիսի մեծ ոճրագործներ, ինչպիսիք էին բռնի տեղահանությունները տնօրինած Շաքրու Քայան և Վանի գավառի նախկին կառավարիչը՝ Թահիր Ջեղեթը, բանտարկված լինելով ազնիվ խոսքով, փախան: Ընդհանուր փոխանակման վերաբերյալ համաձայնագիրը ստորագրվեց 1921թ. հոկտեմբերի 23-ին, և վերջին 53 թուրք բանտարկյալները հեռացան Մալթայից նոյեմբերի 1-ին: Իրենց իսկ՝ անգլիացիների խոստովանությամբ, նրանց թվում կարելի էր գտնել «ակնհայտ բնաջնջողներ»:

¹³ *J. Willis*. Op. cit., p. 52.

Անգլիացիների այս ձախողումը՝ դատական գործ հարուցելու հայկական կոտորածների պատասխանատուների դեմ որևէ անգլիական կամ դաշնակիցների կազմած դատարանում, Մուդրոսի զինադադարի պայմանների ուղղակի հետևանքն է: Օսմանյան ազգային ինքնիշխանության պահպանումը, ամրապնդված լինելով զավառներում բուրքական բանակի ներկայությամբ, փակում է հաղթողների և կամ միջազգային դատազորությանը դիմելու ճանապարհը, առավել ևս, որ Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարությունը հայկական կոտորածների պատասխանատուների դեմ ցուցաբերում է իր սեփական դատազորությունը կիրառելու միտում, որպեսզի բուրք ժողովրդի վրայից մաքրի մեղսակցության մեղադրանքը:

Կոստանդնուպոլսի դատավարությունները


«Ելնելով իր իրավական, բարոյական և մարդկային բնույթից, ցեղասպանությունը պետք է դիտվի որպես միջազգային հանցագործություն» (Ռաֆայել Լեմկին):

Թուրքական դատական ատյանին դիմելը, այսպիսով, ոչ ցանկալի էր և ոչ էլ ընդունելի դաշնակիցների համար: Դա նրանց պարտադրվել էր օսմանյան կառավարության կողմից, որն արագորեն ինքն իրեն հաշիվ էր տվել, որ «Իքթիհադի» պատասխանատուների դեմ օսմանյան դատական ատյանի ողջ լրջությամբ ընթացող դատավարությունները կօգնեն թուրքիային ավելի լավ պայմաններում ներկայանալ Խաղաղության կոնֆերանսին: Մաներն այն էր, որ «Իքթիհադի» կենտրոնական կոմիտեի կողմից գործի դրված բնաջնջման գաղտնի ապարատը մաս-մաս արվեր, և ներկայացվեին դրա առանձին մասերն ապացուցելու համար այդ կոմիտեի անդամների և կուսակցության անդամների ցանցի (որն այդ ժամանակ քափանցել էր կայսրության բոլոր զավառները) պատասխանատուները: Այդպիսով կրնողգծվեր մի գաղտնի ընկերության հանցագործ մտադրությունը, կոնսպիրացիան, բնաջնջելու ցանկության նրա անխափանելի բնույթը՝ արդարացնելու համար նրանց, ովքեր, քաղաքացիական անձինք լինելն թե գինվորա-

կաններ, մասնակցել էին զանգվածային սպանդին: Օսմանյան կառավարության շահերից բխում էր ապացուցել ցեղասպանության փաստը նախքան այդ բառի ի հայտ գալը: Եվ նա դա արեց ապացույցների մի այնպիսի առատությամբ, որ ոչ մի կասկած չէր մնում: Ահա քե ինչու Կոստանդնուպոլսի դատավարությունները, այդ ժամանակվանից ի վեր, խանգարում են թուրքական կառավարություններին: Դրանց մասին չեն հիշատակում: Դրանց հետքերն անհետացել են արխիվներից, և պետք եղան այնպիսի ուսումնասիրողների ջանքերը, ինչպիսիք էին Ա. Կրիգերը և Վ. Դադրյանը, որպեսզի գոյություն ունեցող փաստաթղթերի օգնությամբ վերականգնվեր դրանց հենքը:¹⁴

Արխիվների իշխանության ժամանակաշրջանն ավարտվում է 1918թ. հոկտեմբերի 7-ին, երբ հրաժարական է տալիս պատերազմի երկրորդ կառավարությունը, որը գլխավորում էր Թալեթ փաշան: Բավական մեծ դժվարություններից հետո սուլթան Մեհմեդ VI-ը մեծ վեզիր է նշանակում Իզզեթ փաշային, որը ռազմածովային մինիստրին՝ Ռաուֆ Բեյին, հոկտեմբերի 30-ին ուղարկում է Մուղղոս անգլիացիների հետ զինադադարի շուրջ բանակցելու: Մեկ օր անց, նոյեմբերի 1-ին, «Իքթիհադի» կենտրոնական կոմիտեն գումարում է իր վերջին ժողովը. որոշվում է լուծարել կուսակցությունը՝ ընդհատակում այն վերստեղծելու համար: Սեպտեմբեր ամսվանից այն սկսում է ոչնչացնել իր փաստաթղթերը: Դոկտոր Մեհմեդ Նազիմին և անվտանգության ծառայության ղեկավար Հյուսեյն Ազնիին հանձնարարվում է ոչնչացնել Կոստանդնուպոլսի կենտրոնական ապարատի՝ Նուրի Օսմանիեում գտնվող արխիվները: Նրանք գնում են նաև ռազմական և ներքին գործոց մինիստրությունների արխիվները՝ ոչնչացնելու այն փաստաթղթերը, որոնք կարող էին նրանց որևէ հանցանք վերագրել, մինչդեռ

¹⁴ A. Krieger. *Yozghadi hayosbanoutian vaverakragan badmoutiounos*. New York, 1980. *Vahakn N. Dadrian*. The Documentation of the World War I Armenian Massacres in the Proceeding of the Turkish Military Tribunal. – *International Journal of Middle East Studies* 23 (1991), p. 549-576 և *Genocide as a problem of National and International Law: The World War I Armenian Case and its Contemporary Legal Ramifications*. – *The Yale Journal of International Law*, 14 (2), 1989, p. 221-334.



պրենիեր-մինիստր Թախաթը և ռազմական մինիստր Էնվերն իրենց փաստաթղթերը պահ էին տվել վստահելի բարեկամներին՝ հանձնարարելով նրանց այրել դրանք: Երբ «Իթթիհադի» յոթ ղեկավարները փախան, մի քանի ժամ հետո նրանք արդեն լանամբով ոչնչացրել էին իրենց ոճրագործությունների կանխամտածված լինելու ապացույցները:

Հասարակական կարծիքի վրդովմունքը ստիպում է Իզզեր փաշայի կառավարությանը, որը սրողել էր նրանց փախուստը, հրաժարական տալ: Մուրթանը նշանակում է մի կառավարություն (Թեֆիկ փաշայի գլխավորությամբ), որից «Իթթիհադի» անդամները հեռացված էին: Մամուր, որին պատերազմի ժամանակ «ղնչկալ» էր հազցվում անողորմ գրաքննության կողմից, շղթայագերծվում է և արտահայտում թուրքական բնակչության հուսահատությունը՝ մի զգացում, որը միախառնված էր բարկության, նվաստացման, անհանգստության և ամորի հետ: 1919թ. դեկտեմբերին այստեղ կարելի էր կարդալ ճշգրիտ մեղադրանքներ՝ ուղղված «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը, որը մեղավոր էր կոտորածների հարցում, մինչդեռ պատասխանատվությունը դրանց համար ընկնում էր ողջ բուրք ժողովրդի վրա: Վերջինիս համընդհանուր հանցավորությունից ազատելու համար անհրաժեշտ է դառնում լույս սփռել ոլբերգության վրա և մատնացույց անել դրա պատասխանատուներին: «Սաբահի» գլխավոր խմբագիր Ալի Քեմալը 1918թ. դեկտեմբերին գրում է. «Աշխարհն այդ գիտի. ճշմարտությունն այն է, որ կոտորածները կազմակերպվել են կենտրոնական կոմիտեի հրամանով: Այդ հրամանները փոխանցվել են հատուկ գործակալների միջոցով և ի կատար ավելի բանդիտների կողմից կոմիտեի անմիջական վերահսկողության տակ: Քողազերծել այդ փաստերը՝ մի՞թե չի նշանակում ծառայել թուրք ժողովրդին և նրա գործին»: ¹⁵ Պալատները՝ Սենատն ու Պառլամենտը, պատասխանում են մամուլի պահանջներին: Նոյեմբերի 22-ին Պետական Խորհուրդը խնդրում է սուլթանին ստեղծել մի հանձնաժողով, կայսերական ղեկընտի

¹⁵ Այս հոդվածն արտատպված է «Արամնունդում» (Կոստանդնուպոլիս), 1918թ. դեկտեմբերի 15-ին:

համաձայն, որին հանձնարարվեր հետաքննություն անցկացնել «քաղաքացիական պաշտոնյաների հանցագործությունների» վերաբերյալ անկախ նրանց պաշտոնական աստիճանից:

Այս հանձնաժողովը գլխավորում էր Անատոլիայի նախկին կառավարիչ Հասան Մազարը, որը 1915թ. հուլիսին ընդդիմացավ հայերին արտաքսելու մասին հրամանին և ստիպված եղավ պաշտոնաթող լինել: Հանձնաժողովը կցված էր ներքին գործերի նախարարությանն առնթեր Անվտանգության վարչության ղեկարտամենտին: Այն իրավասու էր ոստիկանության և բանակի օժանդակությամբ խուզարկել կասկածյալների բնակարաններն ու հարցաքննել վկաներին: Երկու ամսվա ընթացքում Մազարի հանձնաժողովը ներքին գործերի նախարարությունից ստացել էր նահանգային 28 քաղաքի կառավարիչներին հասցեագրած գաղտնագրված և չգաղտնագրված հեռագրային հրամաններ: Վերջիններիս բովանդակությանը ծանոթանալուց հետո բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ հրաժարվեցին հրամանը կատարելուց: Վարկաբեկող այս փաստաթղթերը նրանք պահեցին իբրև փոխանակման միջոց՝ ձեռքակալումից կամ հարցաքննումից ինքնաապահովագրվելու համար: Նահանգի իշխանավորները քանիցս դիմել են Մազարին տեղական դատարանների համաձայնողական դիրքորոշումը մերկացնելու և բոլոր ժամանակներում գործող արդարադատությունն իրականացնելու համար: Կենտրոնական կոմիտեի նստավայրում և կուսակցության բազմաթիվ բաժանմունքներում, ինչպես նաև նախկին իթթիհադականների բնակարաններում կատարված խուզարկությունները հնարավորություն տվեցին ձեռք գցել ոչնչացումից փրկված փաստաթղթեր: Եվ վերջապես, հանձնաժողովը հավաքեց քաղաքացիական և զինվորական ականատես պաշտոնատարների վկայությունները. այս բոլոր հայտարարությունները երդմամբ էին տրվել: 1919թ. հունվարի կեսերին հանձնաժողովն ավելի քան 200 համարակալված թղթապանակներում փաստեր էր հավաքել, որոնք հնարավորություն էին տալիս մեղադրել 130 կասկածյալի: Այն իր տրամադրության տակ ուներ բազմաթիվ փաստաթղթեր՝

սկզբնադրյուրներ, բանավոր ցուցմունքների գրառումներ, գեկույցներ: Նախքան ընդունվելը, յուրաքանչյուր գրառված փաստաթուղթ հավաստվում էր երդման բերված նախարարության սպայի կողմից և ամրագրվում «խսկականի հետ ճիշտ է» կնիքով: Փաստաթղթերի մի մասը տպագրվել էր Կոստանդնուպոլսի մամուլում կամ օսմանյան պաշտոնական ամսագրի՝ «Takvim-i Vakayi» («Թարվիմ-ի Վերայի») դատական հավելվածում:¹⁶

Չուզահեռարար, պատգամավորների պայատը կազմեց հետաքննության իր հանձնաժողովը՝ Հինգերորդ հանձնաժողով: 1918թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այն անցկացրել է 14 դատական լսում, հարցաքննել 15 նախարարի, որոնցից երկուսը՝ շեյխ-ուլ-իսլամ: Հանձնաժողովը կազմել ու ռազմական դատարան էր ներկայացրել փաստաթղթերի իր փաթեթը:¹⁷ 1918թ. դեկտեմբերի վերջին Մազարի հանձնաժողովն այն կարծիքին էր, թե դատաքննությունը սկսելու համար տնօրինում է բավարար քանակի փաստաթղթերի: Այնժամ վիճաբանում սկսվեց, թե մեղադրյալները որ դատարանի առջև պետք է կանգնեն: Պաշտպանությունը պահանջում էր նախարարներին դատել Գերագույն դատարանում՝ քաղաքացիական դատավարությանը: Զաղաքացիական նախարարը գտնում էր, որ Գերագույն ռազմական տրիբունալի միջոցով պարտադրվող դատավարությունը, «որքան էլ որ պարզ դրսևորվեին քրեական իրավունքի հանցանքները, դատվողներին կղիտարկի ոչ թե իբրև նախարարների, այլ իբրև դավադրության անդամների»:¹⁸ Փոխարենը, հանձնաժողովը գտնում էր, որ 1909թ. ապրիլի 26-ին «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների՝ իբրիհադականների, կողմից մտցված ռազմական դրությունը շարունակում էր գործել, քանզի դեռևս վերացված չէր: Եվ քանի որ օսմանյան սահմանադրության համաձայն քա-

¹⁶ *Vahakn Dadrian. The Naim-Andonian Documents on the World War I Destruction of the Ottoman Armenians: The Anatomy of a Genocide. International Journal of Middle East Studies (Cambridge), 18 (3), p. 311-360.*

¹⁷ Չինվորական դատարանը հանձնաժողովին էր ներկայացրել նաև փաստական ապացույցներ:

¹⁸ *V. Dadrian. Genocide as a problem..., p. 304-306.*

դաքացիական օրենքների գործողությունը ռազմական դրության ժամանակ դադարեցվում էր, ապա՝ դատավարությունների անցկացման միակ վայրն էր մնում Գերագույն ռազմական դատարանը:

Կայսերական Լրեք հրովարտակներով¹⁹ սուլթանը թույլ տվեց Գերագույն ռազմական դատարան կազմել, սահմանելով, որ ռազմական դրության տակ չրկնող գոտիների դատական մարմինների իրավասությունը կդրվի ռազմական դատարանների վրա և, որ արտագաղթն ու ցեղասպանությունն իրականացնողները կդատվեն Գերագույն ռազմական դատարանով: Մարտի 8-ին, Դամադ Ֆերիդ փաշայի նշանակումից չորս օր հետո, սահմանվեց Գերագույն ռազմական դատարանի նոր կարգավիճակը: Հղկով Օսմանյան կայսրության քրեական օրենսգրքի 371 հոդվածը Գերագույն ռազմական դատարանը փախուստի մեջ գտնվող յոթ իթթիհադականներից պահանջեց 10-օրյա ժամկետում ներկյանալ դատարան, եսկառակ դեպքում կգրկվեն քաղաքացիական իրավունքներից, իսկ գույքը՝ կբռնագրավվեր:²⁰ Յուրաքանչյուր ռազմական դատարան կազմված էր ռազմական նախարարի կողմից նշանակված հինգ անդամից՝ դիվիզիայի գեներալի կոչում ունեցող նախագահից և չորս ատենակալից, որոնցից Լրեքը բրիգադային գեներալի, իսկ մեկը՝ գնդապետի կոչում ուներ: Գլխավոր դատախազին ու նրա տեղակալներին նշանակում էր արդարադատության նախարարը: Իթթիհադականների պարագլուխներից մեկի՝ Մուստաֆա Նազիմ փաշայի դատական գործը վարող Գերագույն ռազմական դատարանի նախագահը որոշում կայացրեց հրապարակային դատավարություն անցկացնել, որի գրավոր հաշվետվությունը պետք է տպագրվեր մամուլում: Այս քայլերը Թուրքիայի բարի կամքի վկայությունն էին և պետք է օգնեին Փարիզի կոնֆերանսի խաղաղ պայմանագրով իրենց համար բարենպաստ պայմաններ ձեռք բերելուն: Իբրոք, 1919թ. մայիսին Դամադ Ֆերիդ փաշան պետք է մեկներ Փարիզ՝ բուրքա-

¹⁹ Հղում է օսմանյան քրեական օրենսգրքի 45 և 55 հոդվածները (Justicier du genocide armenien), Paris. Edition Diasporas. 1981. p. 276.

²⁰ Journal d'Orient, 15 avril, 1919.

կան դիրքորոշումը ներկայացնելու, համաձայն որի համաշխարհային պատերազմի ժամանակ թուրք ժողովուրդն իր կամքին հակառակ է ներքաշվել իբրև հաղակահարկային խարդախությունների մեջ, որոնք էլ հայերի բնաջնջման ու արտաքսման միակ պատասխանատուներն էին:

Վատավարության նախընթաց ժամանակահավածում «Թեջեղուր» կուսակցությունը (ընդհատակ անցած ու վերանվանված նույն ինքը «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն է) քաղաքական քարոզչություն էր ծավալում: 1918թ. դեկտեմբերի սուրբանը ցրեց խորհրդարանը, քանի որ նրա երկու պալատներում էլ կուսակցությունը մեծամասնություն էր կազմում՝ գրեթե ամբողջ կուսակցությունը անձեռնմխելիության իրավունքից և բույլ տալով անհրաժեշտության դեպքում ձերբակալել նրանց: Իբրև հաղակահարկային ընդհատակյա կազմակերպությունը՝ ղեկավարության առումով, գրեթե չէր տուժել, և ուստի կանությունը փաստաթղթերի հավաքման ու Բեյքիրադայի բանտից փախած բանտարկյալների հայտնաբերման գործում լուրջ խոչընդոտների հանդիպեց:

Նախքան իբրև հաղակահարկային ղատավարությունը, ռազմական դատարանները Կ. Պոլսում մի շարք դատավարություններ կազմակերպեցին, որտեղ քննության առնվեցին զանգվածային բնաջնջման քաղաքական դարձած նահանգները: Առաջինը՝ Յոզղաթի դատավարությունը, տեղի է ունեցել 1919թ. փետրվարի 6-ից ապրիլի 7-ը: Յոզղաթի կայմակամ, հետագայում՝ մութասարիֆ Բողազլյանը դատապարտվեց մահվան և կախաղան բարձրացվեց ապրիլի 10-ին, որն մեծ հակացույցի պատճառ դարձավ:

Յոզղաթին հետևեց Տրապիզոնի դատավարությունը, որը տեղեց մարտի 26-ից մայիսի 22-ը: Մահապատժի դատապարտվեցին (բացակա) Տրապիզոնի «Հատուկ կազմակերպության» ղեկավար Բեհալդդին Շաքիրն ու «պատասխանատու քարտուղար» Նալիլ Բեյը:

Մյուս դատավարությունները՝ Խարպուտի, Էրզնկայի, Մոսուլի, Բաբերդի, կայացան ավելի ուշ՝ 1919 և 1920թթ., քանի որ «պատասխանատու քարտուղարի» դատավարությունը

ծանր կացության մեջ դրեց «Հատուկ կազմակերպությանը»:²¹

Պատերազմական տարիների նախարարների ու «Միությանն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների դատավարությունը, որը բուրքական օրաթերթերից մեկի առաջնորդող հոդվածում առանց վարանելու բնութագրվել էր որպես «Օսմանյան կայսրության 600-ամյա պատմության ամենակարևոր դատավարություն», բացվեց 1919թ. ապրիլի 26-ին՝ Կ. Պոլսում: Դատարանի քարտուղարն ընթերցեց մեղադրական դատավճիռը:²² Հայերի բնաջնջմանը մասնակից լինելու մեջ մեղադրվեցին նոյեմբերի 1-ին երկրից փախած յոթ հոգուց հինգը՝ Թալեաթը, Էմվերը, Ջեմալը, Նազըմն ու Շաքիրը և փախուստի մեջ գտնվող ևս երկու նախարար, ինչպես նաև ներկա գտնվող տասը մեղադրյալ, որոնց թվում՝ Մեծ վեզիր Մայիլի Հալիմը, խորհրդարանի նախագահ Խալիլ բեյը, «Իքթիհատի» կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրին, կուսակցության գաղափարախոս, նույնպես կենտրոնական կոմիտեի անդամ Ջիյա Գյոքալվը (կենտրոնական կոմիտեն կազմված էր տասը անդամից), նախկին Շեյխ-ուլ-իսլամ Մուսա Նազիմը, անվտանգության ղեկավար Ազիզը և Կ. Պոլսի ամրոցի պարետ Ջեվադը: Մեղադրանքը ներկայացվել է 1911թ. հունիսի 4-ին փոփոխված Թուրքիայի քրեական օրենսգրքի 45 հոդվածի առաջին մասով, համաձայն որի, «եթե առանձին անհատներ միավորվում են սպանություն կամ ոճրագործություն կատարելու համար, և եթե սպանությունը կամ ոճրագործությունը բաղկացած է մի քանի մասերից, ապա ոճիր գործելու մտադրություն ունեցող ոճրագործներից յուրաքանչյուրը, անկախ այն բանից միայնակ է գործել ոճիրը, թե խմբովի, համարվում է հանցավոր խմբի անդամ, և նրանցից յուրաքանչյուրը լրիվ չափով կրում է քրեական հանցագործի իր պատիժը», և 170-րդ հոդվածով, համաձայն որի «բոլոր նրանք, ովքեր դիտավորյալ սպանություն են գործել կամ եթե անհատը, նույնպես դիտավորյալ, կանխամտածված սպանել է իր մերձավորներից

²¹ Տե՛ս ստորև:

²² Takvim-i Vekayi. N 3540.

որևէ մեկին, դատապարտվում են մահվան»:²³ Դատական որոշումն ամբողջովին վերաբերում էր «Հատուկ կազմակերպությունը», որի գոյությունը պարզվել էր երկու հանձնաժողովների փաստաթղթերն ուսումնասիրելիս: Եվրոպական երկրների և մասնավորապես Գերմանիայի հովանավորության շնորհիվ լավ քողարկված կազմակերպությունը պատերազմի տարիներին պահպանեց իր գոյությունը: Իրականում, «Իքսիհադն» իր տրամադրության տակ ուներ երկու հատուկ կոմիտե: Նրանցից առաջինը՝ պաշտոնականը, որը ստեղծվել էր 1911թ. Տրիպոլիում, ռազմական նախարարի կողմից օգտագործվեց Բալկանյան պատերազմի տարիներին և վերստին աշխուժացավ մինչև Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելը: Նրան հանձնարարվել էր քայքայիչ գործունեություն ծավալել սահմանակից, մասնավորապես՝ մահմեդական, երկրներում: Պատերազմի ողջ ընթացքում «Հատուկ կազմակերպությունը» համագործակցել է գերմանական շտաբի հետ և գործել Սուդանում, Եգիպտոսում, Լիբիայում, ընդհուպ մինչև Ալժիր, ինչպես նաև կայսրության արաբական նահանգներում՝ «ներքին թշնամիների դեմ պայքարելու համար», այսինքն՝ պայքարելու անջատողական նկրտումներ ունեցող ազգայնական խմբերի դեմ: Երկրորդ «Հատուկ կազմակերպությունը» ստեղծվել էր կենտրոնական կոմիտեի կողմից՝ ներքին գործերի, պաշտպանության և արդարադատության նախարարությունների երաշխավորմամբ: Այն ստեղծվել էր քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև հստակ նախանշված վայրերում՝ հայոց սպանող կազմակերպելու համար: «Հատուկ կազմակերպության» գործադիր կոմիտեն գտնվում էր Կ. Պոլսում՝ կենտրոնական կոմիտեի նստավայրում: Այն բաղկացած էր երկու քաղաքացիական (կոմիտեի անդամ դոկտոր Նազրմ և Անատոլիայի պատգամավոր Աբլիֆ բեյ) և երկու զինվորական (անվտանգության ղեկավար Ազիզ բեյ և Կ. Պոլսի ամբոցի զինվորական պարետ Ջևադ բեյ) անձանցից: «Հատուկ կազմակերպության» օպերատիվ կենտրոնը տեղակայված էր Էրզրումում և ղեկավարվում էր կեն-

²³ Օսմանյան կայսերական օրենսգիրք: Անգլերեն քաղցմանությունը՝ *J. Becknill and H. Utudjian. The Imperial Ottoman Code, London, 1913.*

տրոնական կոմիտեի մյուս անդամ դոկտոր Բեհալդդին Շաքիրի կողմից, որը հրամաններ էր արձակում «պատասխանատու քարտուղարների» միջոցով: Վերջիններն էլ կազմում էին «Հատուկ կազմակերպության» կորիզը: Նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու էր որոշակի նահանգի համար և անսահմանափակ իշխանություն ուներ իր նահանգի քաղաքական ու զինվորական ղեկավարության վրա: «Պատասխանատու քարտուղարների» տրամադրության տակ էին գտնվում ժանդարմները՝ նահանգային ոստիկանությունը և ամենակարևորները՝ ավազակային խմբերը, որոնք հատուկ վարժեցված էին հայերի սպանություններն իրականացնելու համար: 1914թ. նոյեմբերին, ներքին գործոց նախարարի հրամանով, «Հատուկ կազմակերպության» պարագլուխները բանտերից բաց էին բողկել քրեական հանցագործներին, մարդասպաններին ու գողերին և սկսել վարժեցնել նրանց օսմանյան բանակի հատուկ ուսումնական հրաձգարաններում: Հետագայում նրանց ուղարկել էին արևելյան նահանգներ ի կատար ածելու իրենց «առաքելությունը»՝ կեղեքելու և բռնի ուժով կոտորելու տեղահանված հայերի քարավանները: Նրանց բոլորին անձեռնմխելիություն էին խտտացել, փոխարենը պահանջելով միայն ավարի 1/3-ը տրամադրել կենտրոնական կոմիտեին:

Մեղադրական դատավճիռը կազմված էր 41 փաստաթղթից, որոնք ապացուցում էին կուսակցության գաղտնի նպատակները, որ Հայկական հարցի լուծման և արևելյան նահանգների հայության բնաջնջման համար «Իթքիհադն» օգտագործել է կլորպական տերությունների հակամարտությունը, որ կազմված է եղել հայերի բնաջնջման ծրագիր և որ դրա նախաձեռնողը Թալևաթն էր, որ այդ համաձայնեցված ծրագրի իրագործումը հաստատվել է բանավոր կամ հրահանգների միջոցով հաղորդվող գաղտնի հրամաններով (դրանք գաղտնագրված հեռագրեր էին, որոնց կցվում էր ծանոթանալուց հետո անմիջապես ոչնչացնելու մասին հրահանգը), որ «պատասխանատու քարտուղարները»՝ քրեական այդ ծրագրի «հաղորդավորները», պետք է պատասխանատվության կանչվեն: Բացի այդ, մերժվում էին այն փաստարկները, ըստ որոնց հակահայկա-

կան միջոցառումներն իրականացվել են ի պատասխան հայերի դավադրության կամ ապստամբության, ավելացվում, որ հայերի բռնի տեղահանության հետ կապված հարցերը գրեթե չեն շոշափվել զինվորական հարցումներում, քանզի դրանք իրականացվել են ռազմաճակատից հեռու գտնվող շրջաններում...

Մայիսի 3-ին Գերագույն զինվորական դատարանը տեղեկացրեց նոր փաստաթղթերի ստացման մասին, և մեղադրական եզրակացությունը վերանայվեց: Այն ավելի հստակեցվեց. «Բռնի տեղահանությունները կանխորոշվել և հաստատվել էին Իքթիհադի կենտրոնական կոմիտեի կողմից և դրա հետևանքներն իրենց զգացնել էին տալիս Օսմանյան կայսրության բոլոր ծայրերում»:²⁴ Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ «բնաջնջվում էր առանձին ընդհանրություն կազմող մի ամբողջ ժողովուրդ»:²⁵

Մայիսի 28-ին 69 մեղադրյալի տեղափոխումը Մալթա²⁶ կարճ ժամանակով ընդհատեց դատավարությունը, որն ի միջի այլոց չարդարացրեց թուրքական կառավարության սպասելիքները: Թերթերը միայն հակիրճ տեղեկություն էին հաղորդում, իսկ ծավալված բանավեճերը գրեթե չհետաքրքրեցին եվրոպացիներին: Այնուամենայնիվ, դատական մի շարք նիստերում, շնորհիվ քաղաքացիական և զինվորական պաշտոնյաների վկայությունների, ապացուցվեց «պատասխանատու քարտուղարներին», «Հատուկ կազմակերպության» ղեկավարների և կենտրոնական կոմիտեի անդամների մեղավորությունը: Հուլիսի 19-ին Գերագույն զինվորական դատարանը կայացրեց իր վճիռը. «Դատարանը Թալեաթին, Էնվերին, Ջեմալին ու Նազիմին հեռակա կերպով մահապատժի դատապարտեց, երեք նախարարի՝ 15 տարվա տաժանակիր աշխատանքների, մյուս երկու մեղադրյալն արդարացվեցին: Մնացած մեղադրյալները Մալթայում էին»:²⁷

1920թ. ապրիլի 24-ին քեմալականների կազմած Անկարայի Ազգային ժողովն անվավեր ճանաչեց հունիսի 7-ին

²⁴ Takvim-i Vekayi, N 3571, S. 128-132.

²⁵ V. Dadrian. The Documentation on the WWI. op. cit., p. 561.

²⁶ Տե՛ս վերևում:

²⁷ Justicier du genocide... op. cit., p. 271-277.

Ստամբուլի կառավարության ընդունած այդ որոշումներն ու հռչակագրերը, միաժամանակ չեղյալ համարելով նրանց ստորագրած համաձայնագրերն ու պայմանագրերը: 1921թ. հունվարի 3-ին Անկարայի կառավարությունը որոշեց կազմել իր Գերագույն զինվորական դատարանը, որը չեղյալ հայտարարեց Անկարայի նահանգի Յոզղաթում կատարված «այսպես կոչված ոճրագործությունների» վերաբերյալ նախկին Գերագույն զինվորական դատարանի որոշումները: 1921թ. ապրիլի 25-ին օսմանյան կոմիտեն հարկադրեց հայտարարել, որ զինվորական դատարաններն անիրավագոր են դատել «ազգայնականների»: 1922թ. նոյեմբերից Անկարայի իշխանությունն ու օրենքները սկսեցին գործել Կ. Պոլսում և ողջ երկրում:

1923թ. մարտի 31-ին ընդունվեց համընդհանուր ներում, որը տարածվում էր զինվորական ու քաղաքացիական դատարանների կողմից դատապարտված բոլոր բանտարկյալների վրա: Նրանց ազատ արձակելուց հետո Մալթայում եղած և ոչ մի բանտարկյալ չպատժվեց: Նրանց մեծ մասը վերականգնվեց իր պշտոններում և նույնիսկ պաշտոնների բարձրացում ստացավ: Կ. Պոլիս խուժելուն պես քենալականները բանտարկեցին զինվորական դատավորներին և նրանց ձեռքին եղած փաստաթղթերը տեղափոխվեցին Անկարա, և այն փաստաթղթերը, որտեղ վկայված էին հրահանգները՝ անհետացան: Դատավարությունների մասին եփչեցնող միակ աննշան հետքը՝ ոչնչացումից փրկված «Թաքվիմ-ի Վերայի» թերթի հատուկենտ օրինակներն են:²⁸

Այժմ ոչ ոք չի կարող տպագրել գաղտնագրված հեռագրի գեթ մեկ օրինակ: Ի վերջո, 1923թ. հուլիսի 24-ին Լոզանի պայմանագրի 1-ին հոդվածով ներում հայտարարվեց:

«Վրիժառույթները»

Հայ վրիժառույթները, որոնց մեծ մասը դաշնակցական կուսակցության անդամ էին, ի կատար ածեցին Կ. Պոլսի դատավարությունների վճիռները: Որոշումն ընդունվեց կուսակ-

²⁸ V. Dadrian, Op. cit., not. 103, p. 224-225.

ցության IX համագումարում. փակ դռների ետևում ներկայացված գեկուցումից հետո ընտրվեց 41 պատասխանատու: «Հատուկ առաքելության» գործունեությունը կարգավորելու էր Արմեն Կարոյի Պասդերմաչյանը, որն էլ դարձավ «Օպերացիա Նեմեսիս» անունով մշակված պլանի կազմակերպիչը:

1921թ. մարտի 15-ին Բեռլինում Մոդոմոն Թեիլերյանը սպանեց Թալեաթին, դեկտեմբերի 6-ին, Հոմոնում Արշավիր Շիրակյանը սպանեց Սայիդ Հայիմին: Տրապիզոնի դատավարության ժամանակ Նայիլ բեյի հետ դատապարտված Բեհալդդին Շաքիրն ու Ջեմալ Ազիմը սպանվեցին 1922թ. ապրիլի 17-ին Բեռլինում, Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի ձեռքով: Հուլիսի 25-ին, Թիֆլիսում Պետրոս Տեր-Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի ձեռքով սպանվեց Ջեմալը:²⁹ Բասմաչների գլխավորած աֆղանցիների ապստամբությանը միացած էնվերը պատասխանատվության կանչվեց բոլշևիկների կողմից՝ աֆղանական սահմանում: Նա զնդակահարվել է 1922թ. օգոստոսի 4-ին: 1926թ. Մուստաֆա Բեմալը Նազիմին կախաղան բարձրացրեց:

Թալեաթի սպանության հեղինակի՝ Մոդոմոն Թեիլերյանի դատավարությունը տեղի ունեցավ 1921թ. հունիսի 2-ից 3-ը՝ Բեռլին-Մոսկովայի երդվյալ ատենակալների դատարանում: Պաշտպանությունը լրջորեն նախապատրաստվել էր դատավարությանը և հավաքել դատավարության հիմքը կազմող համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում գտնվող գերմանացի դիվանագետների ու սպաների վկայություններ: Թեիլերյանի դատավարությունը վերածվեց Թալեաթի դատավարության, և դատարանի առջև բացվեցին ցեղասպանության մանրամասները: Դատարանն ու ատենակալները հասկացան, որ որոշում կայացնելու համար նրանց վաստակները բավարար են և լրացուցիչ ապացույցների կարիք չկա: Հրավիրված վկաներից լսեցին միայն հայերի կոտո-

²⁹ *Arshavir Shiragian. The Legacy; Memoirs of an Armenian Patriot*, Boston, 1976; *Arshavir Chiragian. La Dette de sang*, Paris, 1982; *Y. Ternon. La Cause armenienne*, Paris, 1983, pp. 113-116; *Jacques Derogy. Operation Nemesis*, Paris, 1986.

րածնների մասին պատմող գեկույցների հեղինակ դուկտոր Յոհաննես Լեվսիուսին, գններայ Լիման ֆոն Մանդերսին և նախկին տարագիր ու բանտարկյալ եպիսկոպոս Պալաքյանին: Մեղադրյալը չէր ընդունում, որ ուղարկվել էր իր կուսակցության կողմից: Եվ չնայած Թալեաթի սպանությունը լրջորեն նախապատրաստվել էր դաշնակցական մի խումբ ակտիվիստների կողմից, Թեհլերյանը պնդում էր, թե գործել է միայնակ և վրեժ լուծել բուրքերի կողմից սպանված իր ընտանիքի անդամների համար: Ատենակալները պետք է պատասխանեին հետևյալ հարցին. «Մեղավո՞ր է դատապարտյալ Մոդոմոն Թեհլերյանը 1921թ. մարտի 15-ին Շարլոտենբուրգում գնդակահարված Թալեաթ փաշայի կանխամտածված սպանության մեջ»: Մեկժամյա խորհրդակցությունից հետո ատենակալների նախագահը հայտարարեց. «Մեղավոր չէ իրեն ներկայացվող ոճրագործության մեջ»: Այս որոշումն արտահայտում էր ատենակալների, Գերմանիայի հասարակ քաղաքացիների վրդովմունքը երիտթուրքերի կատարած սպանողի հանդեպ, ինչպես նաև նրանց ցանկությունն ասել. «Թեհլերյանը ճիշտ է վարվել գնդակահարելով Թալեաթին»:³⁰

Երբ Մուստաֆա Բեմալը, կլնելով ազգային համաձայնության սկզբունքից, անցավ մասնատման վտանգի առջև հայտնված Թուրքիայի Լոնվաճմանը՝ առաջին հերթին ձեռնամուխ եղավ Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանմանը: Կ. Պոլսի դատավարության հետքերը վերացնելուց ու դատական նման քննությունների վերջ դնելուց հետո բուրքական նոր պետությունը Լոզանում «չարաբաստիկ Հայկական հարցի» շուրջ համաձայնության եկավ՝ հիմք դնելով այն սկզբունքներին, որոնցով հետագայում առաջնորդվեցին բուրքական բոլոր կառավարությունները. «Հայերի դժբախտությունների ամբողջ պատասխանատվությունը, որոնց նրանք ենթարկվել էին Օսմանյան կայսրությունում, ընկնում է հենց իրենց վրա, քանզի բոլոր դեպքերում առանց բացառության, բուրքական իշխանությունն ու բուրք ժողովուրդը դիմում էր ճնշումների և հետապնդումների միայն այն ժամանակ, երբ

³⁰ Ս. Թեհլերյանի դատավարության սղագրությունը տես «Justicier...»:

լցվում էր համբերության բաժակը»:³¹ Պաշտպանվելու այս գիծը դարձավ աներեր և բոլոր նրանք, ովքեր մերժում էին Հայոց ցեղասպանությունը՝ հանգստացան: 1923թ. հետո բուրքական դիվանագիտությունը շարունակում էր հոգ տանել, որպեսզի հայերի կոտորածների մասին չհիշեն. լավ կլիներ, եթե այն անհետանար ազգերի հիշողությունից և որ միջազգային նոր ճգնաժամերի առիթով մոռացվեր:

1945թ. հետո Թուրքիան դարձավ ՄԱԿ-ի անդամ, այնուհետև ստորագրեց ցեղասպանության մասին կոնվենցիան: Այն ժամանակ, երբ սփյուռքահայությունը փորձում էր ապացուցել, որ 1915-1916թթ. իրադարձությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ցեղասպանություն և երբ ապրիլի 24-ին նշվում էր ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, բուրքական կառավարությունը փոխեց իր ռազմավարությունը՝ այլևս չգոհանալով վաաստերի ժխտմամբ, այն հարստացրեց անցյալում հայերի գոյությունը բացառող «պատմական աշխատություններով»:

Թուրքերի ժխտման հիմնական նպատակը՝ իթթիհադականների կամ օսմանյան կառավարության կողմից քրեական կանխամտածվածության հանգամանքը բացառելն էր, իսկ եթե չկա կանխամտածվածություն, չի կարելի խոսել նաև ցեղասպանության մասին: Բացառման այս մոտեցումը զործի էր դրվել և հսկվում էր գորեղ մի ուժի կողմից, որը սպառնալիքներով ու շանտաժով մերժում էր որևէ այլ տարբերակի գոյությունը: Այս անթույլատրելի դիրքորոշումն ամրապնդելու նպատակով բուրք պատմաբանների կողմից Անկարայում ստեղծվեց ապատեղեկատվության իսկական լաբորատորիա, որը ներկայացնում էր «երևակայական ցեղասպանության» դեպքերի ու պատճառների բուրքական տարբերակը: Այս ապատեղեկատվությանը ծառայող գիտնականները նախապատվությունը տալիս էին 1915թ. հայերի կողմից կազմակերպված և իբրև թե լորդ Բրայսի ու Արնոլդ Թոյնբիի գլխավորած անգլիական գաղտնի ծառայությունների կողմից հովանավորվող դատավարությանը, որի մասնակիցները հետագայում ապաստան էին

³¹ A. Mandelstam. La Societe des nations., p. 273. Այստեղ քննարկվում է Լեոգանի կոնֆերանսի Դ-եղին գլխքը, էջ 258-307:

գտել Անգլիայում, Ֆրանսիայում և Եգիպտոսում: Ի վերջո, եվրոպական պատմաբաններին ապացուցելու համար, թե իրենց արխիվներում ցեղասպանության կանխամտածվածությունը հաստատող որևէ փաստաթուղթ չկա, թուրքական կառավարությունն օսմանյան արխիվներում գործի դրեց իր պատմաբաններին: 1989թ. հունվարի 2-ին Թուրքիայի արտգործնախարարը հայտարարեց, որ հետազոտողները հնարավորություն կստանան ծանոթանալ Օսմանյան կայսրության հինգդարյա միջազգային հարաբերությունների պատմության արխիվներին: Հետագայում նա շեշտեց, որ այդ նյութերը բաց են ևղել ընդհուպ մինչև 1894թ. և սպասվում է, որ որոշ ժամանակ անց պատրաստ կլինեն նաև Համաշխարհային պատերազմի վերաբերյալ փաստաթղթերը: Իրականում, հետազոտողները կարող էին ուսումնասիրել միայն նախարարությունների և թուրք պաշտոնյաների արխիվները, ընդ որում, վերջիններս ելնելով «ազգային անվտանգության և հասարակական կարգի պահպանման շահերից», ինչպես նաև մյուս պետությունների հետ Թուրքիայի ունեցած հարաբերությունների բարդություններից խուսափելու համար կարող էին արգելել մուտքն արխիվ: Իսկ գլխավորական դատարանների կամ էլ պաշտոնական հանդեսի իրավաբանական հավելվածի նյութերը սակավադեպ էին:

Մի շարք հանգամանքներ թույլ են տալիս կարծել, որ դրանք ոչնչացվել են: Թուրքական կառավարությունը խրախուսում էր օտարազգի թուրքագետներին պաշտպանել իրենց տեսակետն ու ժխտել Հայոց ցեղասպանությունը: Չբացահայտված պատմական բազմաթիվ անցքեր կարող էին պատմաբանների վիճաբանության առարկա դառնալ: Այն է՝ ծանոթությունը «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի մեծամասնության քրեական նկրտումներին և օսմանյան պետության կարևորագույն օղակների հարկադրական մասնակցությանը զանգվածային սպանության պլանավորմանն ու իրագործմանը: Սակայն թուրք պատմաբանների կողմից համառորեն մերժված բանավեճի այս եղանակը հարցը գիտական հարթությունից տեղափոխեց քաղաքական հողի վրա և վերաճեց ընդհարման:

Թուրքերի կողմից ցեղասպանության ժխտումը, որը ոչ այլ ինչ էր, երև ոչ սպանության երկրորդ փորձ, խոցեց հայերի ազգային ինքնագիտակցությունը: Տարօրինակ է, բայց հայոց ինքնության ոտնահարման այս նոր փորձն օգնեց հայերի ինքնագիտակցության վերածննդին: Ժխտելով Հայոց ցեղասպանությունը, Թուրքիան հայությանը հնարավորություն տվեց հաղթահարել 1915թ. ցնցումը և կրկին երազել նախնյաց հողերը վերադարձնելու մասին: Նահատակների հետնորդներն ու ողջ մնացածներն այլևս պաշտպանված լին և պահանջեցին փոխհատուցել վնասը:

Ապացույցներ հավաքելու նպատակով Հայոց ցեղասպանության վերաբերյալ սկսեցին պատմական հետազոտություններ կատարվել: Կազմվեց ավելի համոզիչ ու բովանդակալից թղթապանակ, որը անվանի պատմաբանների քննարկմանը ներկայացնելու փոխարեն քննության հանձնվեց այլ առյանի և առաջին հերթին՝ միջազգային մարմիններին:

1967թ. հոկտեմբերի 10-ին, իր 20-րդ նստաշրջանում, հետազոտում ՄԱԿ-ի հասարակական և տնտեսական խորհրդին միացված մարդու իրավունքների հանձնաժողովի բաժանմունքի ազգային փոքրամասնությունների իրավունքների պահպանման և խտրականության դեմ պայքարի հարցերով ենթահանձնաժողովը որոշեց իր նոր ծրագրում ընդգրկել 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայով ձևակերպված ցեղասպանության կանխարգելման և հանցագործության դեմ պայքարի հարցը:

1973թ., դեռևս 1971թ. զեկուցող նշանակված Ռուանդայի պատգամավոր Նիկոլեմ Ռուհասիանիկոն, իր կազմած նախնական հաշվետվության 30-րդ պարագրաֆում երեք տող նվիրել էր հայերին. «Վերադառնալով ժամանակակից դարաշրջան, կարելի է նշել, որ հայերի կոտորածը հավաստող անգամ մեկ հարուստ փաստաթուղթն էլ բավարար է, որպեսզի այն գնահատվի իբրև XX դարի առաջին ցեղասպանություն»: Մարդու իրավունքների հանձնաժողովի թուրք ներկայացուցիչ Օսման Օլկայր պահանջեց վերանայել այս, ինչպես նաև ևս երկու պարագրաֆ, ուր խոսվում էր կրոնական կազմակերպությունների մասին: Օգտվելով առիթից, հայոց Սփյուռքը սկսեց

Մաքս Քլիվեջյանի դատավարությունը՝ 1982թ. հունվարի 22-23-ը Էքս-Էն-Պրովանսում:³⁴ Այն չորս հայերը, որոնք 1981թ. սեպտեմբերի 24-ին գրոհեցին Փարիզի թուրքական դեսպանատունը և պատանդներ վերցրին, 1984թ. հունվարին պատասխանատվության կանչվեցին Փարիզի երդվյալ ատենակալների դատարանում:³⁵

Ահաբեկչության դադարումից հետո Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը կրկին դիվանագիտական ձևակերպում ստացավ: 1984թ. ապրիլին Ժողովուրդների իրավունքների մշտական ատյանը՝ ճանաչված գործիչներից կազմված իրավաբանական այս կազմակերպությունը (նրա երևք անդամը Նորբեյյան մրցանակակիրներ Լին), աշխատանքն ավարտելուց հետո որոշեց, որ «կոտորածի և բռնի տեղահանության միջոցով կազմակերպված հայ ժողովրդի բնաջնջումն իրենից ակնհայտորեն ներկայացնում է քրեական հանցագործության այն տեսակը, որը բնութագրվում է իբրև ցեղասպանություն», որ «երիտթուրքերի կառավարությունը մեղավոր է այդ ցեղասպանության համար» և որ «այդ պատասխանատվությունը պարտավորեցնում է պաշտոնապես ճանաչել ցեղասպանության եղելությունն ու հայ ժողովրդին հասցրած վնասը»:³⁶ 1982թ. ՄԱԿ-ի Լեթսհանձնաժողովը կրկին դիմեց Տնտեսական և հասարակական խոհրդին՝ ստուգելու և հարցը քննարկման ներկայացնելու իրավունք ունեցող նոր զեկուցող նշանակելու խնդրանքով: Կառավարությունների խորհրդակցություններից հետո ՄԱԿ-ի հատուկ բաժինները՝ տարածաշրջանային և ոչ կառավարական (պետական) կազմակերպություններն ու ցեղասպանությամբ զբաղվող համալսարանական գիտնականները 1985թ. օգոստոսի 26-ին ներկայացրեցին հատուկ զեկուցող Բենջամին Վիտակերի «Ցեղասպանության կանխարգելման և քրեական հետապնդման հարցի վերանայված և օրակարգային տարբերակ» վերնագիրը կրող զեկուցումը: 1986թ. օգոստո-

³⁴ Նույն տեղում:

³⁵ 1984թ. հունվարին Վիեննայում ելույթ ունենալիս Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը 1915-1916թթ. դեպքերը որակեց որպես ցեղասպանություն:

³⁶ La crime de silence, Paris, 1984, p. 348.

սին ենթահանձնաժողովը հաստատեց Վիտակերի գեկուցումը, ուր բարձրացվում էր հայերի ցեղասպանության հարցը, դրանով իսկ վերջ դնելով 30-րդ պարագրաֆի հետ կապված 13 տարվա վճճերին, ուր հայերի ցեղասպանությունը բնորոշվում էր որպես միջադեպ:³⁷ Սակայն ենթահանձնաժողովի անդամների մի շարք վերապահումների, մասնավորապես՝ 24-րդ պարագրաֆի առնչությամբ (որը պատմության մեջ ցեղասպանության նոր դեպքեր էր հիշատակում, սրանով իսկ նոր առարկումների տեղիք տալով) Վիտակերի գեկուցումը չտեղափոխվեց Մարդու իրավունքների հանձնաժողով: Ինչևէ, հայ համայնքի ներկայացուցիչները հայտարարեցին, որ ՄԱԿ-ը ճանաչել է հայերի ցեղասպանությունը, իսկ թուրք պատգամավորները միջազգային ատյաններում պնդում էին, որ ՄԱԿ-ը հրաժարվել է այն ճանաչելուց:

Քաղաքական բանավեճը տեղափոխվեց Եվրախորհրդարան: Ժակ Վանդենկերբուկի «Հայկական հարցի քաղաքական լուծումը» գեկուցումը կրքոտ վեճերի առարկա դարձավ:³⁸ Չնայած թուրքական կողմից ձեռնարկված հակաքայլերին, 1987թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանը, ցավ հայտնելով «ուայկական ջոկատների անիմաստ ահաբեկչության համար... (որը չի արդարացվում հայ ժողովրդի մեծամասնության կողմից)», ճանաչեց հայերի ցեղասպանության փաստը և որոշում կայացրեց, որ Թուրքիան, հրաժարվելով ճանաչել ցեղասպանությունը, խոչընդոտներ է ստեղծում Եվրամիությանն իր անդամակցելու համար.

«... Կարծում ենք, որ 1915-1917թթ. Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի նկատմամբ գործադրված այդ ողբերգական անցքերն իրենցից ներկայացնում են ցեղասպանություն և համապատասխանում են ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանություն կազմող հանցագործությունների կանխարգել-

³⁷ Ben Wihtaker. Revised and Updated Report on the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide: 1985թ. հունիսի 2-ի գեկույցը ՄԱԿ-ի ենթահանձնաժողովում (F/CN 4/Sub. 2/1985).

³⁸ Վանդենկերբուկի գեկույցը, PE 97-248/3.

ման և վերացման» մասին կոմպենցիային:

... Այդուհանդերձ, գիտակցելով, որ ժամանակակից Թուրքիան չի կարող պատասխանատու լինել Օսմանյան կայսրությունում հայերի վերապրած ողբերգության համար, հաստատակամորեն ընդգծում է, որ այդ պատմական անցքերն իբրև ցեղասպանություն ճանաչելը ներկայիս Թուրքիայի համար չի կարող քաղաքական, իրավաբանական կամ նյութական նկրտումների առիթ հանդիսանալ:

... Խորհրդի պահանջը ստիպել ներկայիս թուրքական կառավարությանը ճանաչելու 1915-1917թթ. հայերի նկատմամբ կատարված ցեղասպանությունը, կարող էր նպաստել քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայկական պատվիրակների միջև:

... Կարծում ենք, որ թուրքական ներկայիս կառավարության կողմից հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի կառավարության իրականացրած ցեղասպանության մերժումը, ... (նկատի ունենալով նաև թուրքական կառավարության դեմ ուղղված մյուս բողոքները) անհաղթահարելի խոչընդոտներ կստեղծի ընկերակցությանը Թուրքիայի անդամակցելու համար»:³⁹

³⁹ A 2-33-87 փաստաթուղթը: Հայկական հարցի որոշման բանաձևը:

A II
88503